դիցուք, Անգլիան։ Զենք վիճում այս առարկութեան դէմ, մանաւանդ որ բոլշեւիկեան դիւանագիտական «խաղերի» մասին մենք էլ որոշ հասկացողութիւն ունինք։ Բայց խաղով թէ ոչ խաղով, բոլշեւիկները ընդունել են նախապատերազմական պարտքերը Ֆրանսային վճարելու սկզբունքը. ընդունել են պաշտօնապէս, հրապարակօրէն եւ ի զուր են նրանք ջանում փոշի ցանել միամիտների աչքին՝ իրենց նոր նահանջը քողարկելու համար։

Այս բոլորով հանդերձ, կրկնում ենք, որ բոլշեւիկները հին պարտքերի մերժման գործում աւելի մեծ տոկունութիւն են հանդէս բերում, քան թէ միւս գործերում։ Եւ հասկանալի է դա. խնդիրը մի սկզբունքի չէ վերաբերում, որ նրանք հնացած լաթի պէս պոկեն իրենց վրայից եւ դէն շպրտեն։ Նրանցից մի կամ մի քանի նահանջներ չեն պահանջում, որ նրանք, դլխացաւանքներից ազատելու համար, ձգեն հակառակորդի բերանը՝ կոկորդիլոսեան արցունքներով մխիթարելով զիջած հողամասի հետ օտար լծի տակ ընկնող ժողովրդին։ Նրանցից դրամ են պահանջում, հնչուն դրամ, որին նրանք այնքա՞ն կարիք ունեն «Կոմկուսի» կազմակերպական մեքենան պահելու, «Կոմինտերների» ծախքերը հոգալու, իրենց միջազգային արկածախնդրութիւնների պատճառած վնասները գոցելու եւ առհասարակ «ընկերվարական շինարարութեան» հետ կապուած նման գործերը կարգադրելու համար...

Սակայն, պիտի կարողանա՞ն բոլշեւիկները, թէկուզ այս մերկանալի նկատումներով շարունակել իրենց դիմադրութիւնը պարտքերի խնդրում եւ եթէ կարողանան՝ դրանից Խորհրդային երկիրները պիտի շահուե՞ն թէ տուժե՞ն։ Մարգարէ չպէտք է լինել այս հարցերին պատասխանելու համար։ Բայց մենք աւելորդ ենք համարում նրանցով զբաղուել, որովհետեւ մեր տեսութիւնը վերաբերում է բոլշեւիկեան գործունէութեան անցեալին եւ ոչ թէ ապագային։

* * *

Անցնում ենք բոլշեւիկեան յեղաշրջման վերջին եւ ամենակարեւոր առաջադրութեանը՝ համաշխարհային ընկերային յեղափոխութեանը։

Բոլշեւիկների հաւատով հանդանակն էր սա հոկտեմբերեան օրերին։ Դեռ դրանից առաջ, Ցիմմերվալդի խորհրդաժողովի ժամանակ, նրանց ներկայացուցիչները պնդում էին, որ ազգերի բաղխումը բոլոր երկիրներում պիտի վերածուի ընկերային յեղափոխութեան, եւ դաւաճանի խարան էին դնում այն բոլոր ընկերվարականների ճակատին, որոնք ա՛յլ ըմբռնում ունէին պատերազմի վախճանի մասին եւ ա՛յլ ձեւով էին պատկերացնում ընկերային յեղափոխութիւնը։

Փետրուարեան Յեղափոխութիւնը, որ մի հուժկու հարուածով քաղաքական կեանքի երեսը դուրս բերեց Ռուսաստանի աշխատաւոր դանդուածները եւ մանաւանդ բանուորութիւնը, թեւաւորեց համաշխարհային ընկերային յեղափոխութեան այս հաւատը այն աստիճան, որ բոլշեւիկները նրանից դուրս, կարելի է ասել, այլ բան չէին տեսնում։ Եւ եթէ, 1917-ի փետրուարից մինչեւ հոկտեմբեր ընկերային յեղափոխութիւնը ոչ մի երկրում կենդանութեան նշան չէր ցոյց տալիս, դրա պատճառը նրանք համարում էին այն, որ ռուս ընկերվարականները իրենց ներկայացած պատեհութիւնը չէին ցանկանում օգտագործել՝ իսկական ընկերային յեղափոխութեան օրինակ տալու եւ այդ օրինակով միջազգային աշխատաւորութիւնը իրենց յետեւից քաշելու համար։ Գլխաւորապէս սրանով պէտք է բացատրել այն անդուլ ատելութիւնը, որ այդ օրերին բոլշեւիկները տածում էին դէպի ընկերվարականները, մի ատելութիւն, որ նրանց յետագայ հիասթափութիւններին համընթաց զարգանալով՝ հասաւ այսօրուան աստիճանին...

Հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ՝ համաշխարհային ընկերային յեղափոխութեան բռնկումը այլեւս օրերի եւ մինչեւ իսկ ժամերի խնդիր էր թւում բոլշեւիկներին։ Յոռետեսներին հաւատ ներշնչելու համար նրանք «զօրաւոր» պատճառաբանութիւն ունէին։ — Պատերազմող ուժերը դրեթէ հաւասարակշռուած են, հետեւարար զուր է սպասել, թէ պատերազմը մօտիկ ապագայում պիտի վերջանայ մէկ կամ միւս կողմի պարտութեամբ։ Հակամարտ բանակները կռուի վախճանը չտեսնելով՝ ծայրայեղօրէն ջղայնացած են եւ քայքայման նը-